ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

---

09.04.2025թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. Օրենքի նախագիծը,
2. Օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը,
3. Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյան:

Խնդրում ենք օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՈՎԻԿ ԱՂԱԶԱՐՅԱՆ
ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 3-րդ կետում «հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը» բառերը փոխարինել «թիկունքով դեպի հանձնաժողովը» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### Առկա վիճակը

Այս պահի կարգավորումների համաձայն քվեախցիկը քվեարկության սենյակում տեղադրվում է այնպես, որ ընտրողը մեջքով լինի դեպի պատը, իսկ դեմքով՝ դեպի հանձնաժողովը: Այս կարգավորումը նպատակ ունի ապահովել ընտրության գաղտնիությունը: Սակայն ակնհայտ է, որ ժամանակակից տեխնոլոգիաների պայմաններում գաղտնիության ապահովումը խոչընդոտվում է շատ էական և խնդրահարույց հանգամանքով: Այն է՝ ամենասովորական հեռախոսով քվեաթերթիկը լուսանկարելու, իսկ մի փոքր ավելի ֆունկցիոնալ հեռախոսով տեսանկարահանելու հնարավորությունը: Ցավոք սրտի, մեր հասարակության մեջ գոյություն ունեցող շատ բացասական դրսևորումներ հնարավորություն են տալիս հավանական ընտրակեղծարարներին օգտվել ցանկացած հնարավորությունից: Յուրաքանչյուր ընտրող կարող է որևէ մեկին խոստանալ իր ձայնը՝ կոնկրետ թեկնածուին կամ քաղաքական ուժին տալու, իսկ հետո ունենալով ազատության բավարար ապահովվածության ընտրությունը՝ կատարել իր խղճի և համոզմունքների համաձայն:

Վերը նշված հնարավորությունը կարող է էապես ազդել ընտրության վրա, որովհետև ցանկալի խոստումը լսելուց հետո հավանական ընտրակեղծարարը «կխնդրի» ընտրողին լուսանկարել քվեաթերթիկը և նույնիսկ տեսանկարահանել քվեարկության գործընթացը:

**Ինչ է առաջարկվում.**

Ըստ առաջարկվող փոփոխության քվեախցիկը պետք է տեղադրվի այնպես, որ ընտրողը քվեարկության պահին լինի թիկունքով դեպի հանձնաժողովը: Եվ եթե քվեախցիկները տեղադրվեն քվեարկության գործընթացին մասնակիցներից պատշաճ հեռավորության վրա, ինչն անհնարին կդարձնի նկատել, թե ընտրողը ինչպես է քվեարկում, ապա և քվեարկության գաղտնիությունը ապահոված կլինի և

ընտրողի ազատ կամարտահայտումը: Այս դեպքում, գրեթե անհնար կլինի նկարել քվեաթերթիկը, կամ տեսանկարահանել քվեարկության գործընթացը, որն առավելագույնս կապահովվի քվեարկության գաղտնիությունը, թափանցիկությունը, և որ ամենակարևորն է՝ ընտրողի ազատ կամարտահայտությունը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 58. Քվեարկության խցիկները**

1. Քվեարկության համար հատկացվում են խցիկներ՝ յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ խցիկ:

2. Քվեարկության խցիկը պատրաստվում է այնպես, որ ընտրողը կարողանա քվեարկության սենյակում գտնվող անձանցից գաղտնի քվեարկել, ունենա բավարար լուսավորվածություն, տեղադրված լինի գրիչ, չօգտագործված քվեաթերթիկների արկղ:

3. Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն մեկ մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի ~~հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը:~~ թիկունքով դեպի հանձնաժողովը: